Ա Ռ Ա Ր Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 1-Ի ԹԻՎ 73-Ա ԵՎ 79-Ն ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Թիվ 73-Ա որոշման նախաբանում «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետին և «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածին կատարված հղումները սխալ են:

Թիվ 79-Ն որոշման նախաբանում անհրաժեշտ է հղում կատարել «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասին, համաձայն որի համայնքի բյուջեում փոփոխություններ և (կամ) լրացումներ կարող են կատարվել համայնքի ղեկավարի կամ համայնքի ավագանու անդամի (անդամների) առաջարկությամբ: Այդ փոփոխությունները և (կամ) լրացումները չեն կարող խախտել համայնքի բյուջեի՝ վերը նշված օրենքով սահմանված հավասարակշռությունը: Համայնքի ավագանու անդամների առաջարկած այն փոփոխությունները և (կամ) լրացումները, որոնք նվազեցնում են համայնքի բյուջեի մուտքերը կամ ավելացնում են ելքերը, համայնքի ավագանին քննարկում է միայն համայնքի ղեկավարի եզրակացության առկայությամբ և ընդունում ավագանու անդամների ընդհանուր թվի ձայների երկու երրորդով:

Հաշվի առնելով վերը նշվածը՝ որոշման իրավաչափության վերաբերյալ հնարավոր չէ եզրակացություն տալ, քանի որ որոշման մեջ նշված չէ, թե ում առաջարկությամբ է բյուջեում փոփոխություն կատարվել:

Որոշման համարակալումը սխալ է կատարված: Բացի այդ, որոշման 1-ին կետի 1-ին ենթակետում նշված «1257» թիվն անհրաժեշտ է փոխարինել «1261» թվով, քանի որ տողում նշված գումարը համարվում է ֆոնդային բյուջեի եկամուտ:

Կատարող՝ Շ. Շաքարյանց
10.12.2019թ.